ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Քուվեյթի Պետության Կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),

ճանաչելով բարեկամական հարաբերությունների զարգացումը Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության միջև,

ցանկանալով ամրապնդել և զարգացնել Պայմանավորվող կողմերի միջև տնտեսական և տեխնիկական համագործակցությունը՝ ի շահ իրենց ժողովուրդների,

ղեկավարվելով կայուն տնտեսական աճի ապահովման, իրենց քաղաքացիների կենսամակարդակի բարելավման և իրենց բնական և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակներով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Առարկան

Պայմանավորվող կողմերը, իրենց համապատասխան ազգային օրենսդրություններին համապատասխան, և հաշվի առնելով իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները, զարգացնում, ամրապնդում և դիվերսիֆիկացնում են տնտեսական բնագավառները, ինչպես նաև գիտական և տեխնիկական փոխշահավետ համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում:

Հոդված 2
Գործողության ոլորտը

1. Սույն Համաձայնագրի մեջ նշված համագործակցությունը մասնավորապես ներառում է, բայց չի սահմանափակվում, հետևյալ ոլորտների խթանումը.

ա) նախագծերի հաստատում բոլոր տնտեսական բնագավառներում, ինչպիսիք են՝ ֆինանսները, բանկային գործը, արդյունաբերությունը, ներդրումները, զբոսաշրջությունը, առողջապահությունը, տրանսպորտը և հեռահաղորդակցությունը, երիտասարդությունը և սպորտը, կրթությունը, ծառայությունները, մարդկային ռեսուրսները, տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը,

բ) համագործակցության հատուկ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մասնագետների փոխանակում և ուսուցում,

գ) Պայմանավորվող կողմերի միջև համագործակցության խթանում՝ նպատակ ունենալով խթանել ներդրումները բոլոր այն բնագավառներում, որոնք փոխադարձ կհամաձայնեցվեն Պայմանավորվող կողմերի միջև:

2. Պայմանավորվող կողմերը խորհրդակցում են միմյանց հետ՝ իրենց համագործակցության գերակա ոլորտները, ինչպես նաև ներառվելիք տնտեսական, գիտական և տեխնիկական նոր ուղղությունների շուրջ համագործակցությունը նախանշելու նպատակով:

Հոդված 3
Համագործակցության միջոցները

Սույն Համաձայնագրի նպատակներին հասնելու համար Պայմանավորվող կողմերը գործում են իրենց երկրներում կիրառվող օրենքների և կանոնակարգերի շրջանակներում՝ խթանելու և նպաստելու.

ա) պետական մարմինների միջև համագործակցությանը,

բ) մասնագիտական կազմակերպությունների, պալատների և ասոցիացիաների միջև կապերին,

գ) տեխնիկական հետազոտություններին առնչվող տեղեկատվության փոխանակմանը,

դ) անհատների, պաշտոնյաների և տնտեսվարող սուբյեկտների միջև համագործակցությունը խթանելու համար նախատեսված այցելություններին և աշխատանքներին,

ե) տոնավաճառների և ցուցահանդեսների, ինչպես նաև տնտեսական սեմինարների և գիտաժողովների կազմակերպմանը:

Հոդված 4
ԱՀԿ-ի ներքո ստանձնած պարտավորությունները

Սույն Համաձայնագիրը կիրարկելիս Պայմանավորվող կողմերը գործում են Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակների ներքո ստանձնած իրենց համապատասխան պայմանագրային պարտավորություններին համապատասխան:

Հոդված 5
Հատուկ համաձայնագրերի կնքումը

Անհրաժեշտության դեպքում, հիմնվելով սույն Համաձայնագրի դրույթների վրա՝ Պայմանավորվող կողմերը կնքում են հատուկ համաձայնագրեր, որոնք առնչվում են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված համագործակցության ոլորտներին և նախաձեռնում են այլ հատուկ նախագծեր, որոնք կարող են համաձայնեցվել միմյանց միջև:

Հոդված 6
Միջկառավարական համատեղ հանձնաժողովի ստեղծումը

1. Սույն Համաձայնագրի կիրարկմանը նպաստելու նպատակով ստեղծվում է Միջկառավարական համատեղ հանձնաժողով (այսուհետ՝ «Համատեղ հանձնաժողով»), որը բաղկացած կլինի Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից: Համատեղ հանձնաժողովի նիստերն անց են կացվում փոխհամաձայնեցված ժամկետներում՝ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի խնդրանքով՝ հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Քուվեյթի Պետությունում: Համատեղ հանձնաժողովը նախագահում են, Քուվեյթի կողմից, Քուվեյթի Պետության ֆինանսների նախարարությունը, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը:

2. Համատեղ հանձնաժողովը, ի թիվ այլ լիազորությունների, ունի հետևյալ հարցերը քննարկելու լիազորություն.

ա) Պայմանավորվող կողմերի միջև տնտեսական և տեխնիկական համագործակցության խթանում և համակարգում,

բ) առաջարկությունների մշակում, որոնց նպատակն է վերացնել այն խոչընդոտները, որոնք կարող են առաջանալ ցանկացած այնպիսի համաձայնագրի կամ նախագծի իրականացման ընթացքում, որը կարող է ստեղծվել սույն Համաձայնագրին համապատասխան,

գ) բոլոր խոչընդոտների քննարկում, որոնք կարող են խաթարել Պայմանավորվող կողմերի միջև տնտեսական համագործակցության զարգացումը:

3. Համատեղ հանձնաժողովը կարող է քննարկել համագործակցության ցանկացած այլ բնագավառ կամ ձև, որը նշված չէ սույն հոդվածի 2-րդ պարբերությունում:

Հոդված 7
Վեճերի կարգավորումը

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանմանը կամ կիրարկմանն առնչվող ցանկացած վեճ կարգավորվում է բարեկամաբար՝ Պայմանավորվող կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 8
Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին ծանուցագրի ստացման օրը, որով Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով գրավոր տեղեկացնում են միմյանց սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

2. Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել և վերանայվել՝ դիվանագիտական ուղիներով Պայմանավորվող կողմերի միջև հայտագրերի փոխանակման միջոցով: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է հինգ (5) տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա (5) ժամկետով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը գրավոր չի ծանուցում մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին՝ դրա գործողության ավարտից առնվազն վեց (6) ամիս առաջ:

4. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում սույն Համաձայնագրի ներքո նախաձեռնված որևէ հատուկ համաձայնագրի, նախագծի և աշխատանքի վավերության կամ գործողության ժամկետի վրա՝ մինչև այդպիսի հատուկ համաձայնագրերի, նախագծերի և աշխատանքների ավարտը:

Կատարված է Քուվեյթ քաղաքում 2010թ. դեկտեմբերի 9-ին, որը համապատասխանում է ……. ……. 1431թ., երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերենով, արաբերենով և անգլերենով, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. մայիսի 15-ին